ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

30 ապրիլի 2019 թվականի N 90-Ա

ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 699-Լ որոշմամբ հաստատված ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետը, ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ-ի 2019թ-ի ապրիլի 04-ի թիվ 15 գրությունը, ինչպես նաև գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՍՊԸ)՝ ՀՀ Սյունիքի մարզի Ողջիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրում արդյունահանման աշխատանքներ կատարելու 2013 թվականի փետրվարի 20-ի օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքում (թիվ ՇԱԹՎ-29/271, ՊՎ-271, ԼՎ-271) կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 2013 թվականի փետրվարի 20-ի թիվ ՇԱԹՎ-29/271 թույլտվության մեջ՝

- «125.0 հազ մ³» բառերը փոխարինել «33.7 հազ մ³ վերականգնվող պաշար ըստ C_1 կարգի » բառերով (մեկ միավոր վերկանգնման գործակցով):

2. Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել

1) ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում (թիվ ՇԱԹՎ-29/271, ՊՎ-271,) համապատասխան փոփոխությունների կատարումը.

2) համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող Հակոբ Վարդանյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ

4/30/2019

X

VERIFIED OCSP 4/30/2019 15:55:20 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ